Տեղեկագիր մայիս 2019

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019Թ. ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ. մայիս ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում I խմբի միկրոօրգանիզմներով հարուցված, հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող հիվանդություններ, դեպքեր չեն արձանագրվել:

Հատուկ վտանգավոր վարակներ

Բրուցելոզ

2019թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել է բրուցելոզի 27 դեպք, որից 1-ը՝ Երևան քաղաքում, 7-ը՝ Սյունիքի մարզում, 5-ը՝ Արագածոտնի մարզում, 6-ը՝ Արարատի մարզում, 3-ը՝ Արմավիրի մարզում, 3-ը՝ Լոռու մարզում, 1-ը՝ Գեղարքունիքի մարզում, 1-ը՝ Շիրակի մարզում: Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետությունում 2018-2019 թթ հունվար-մայիս ամիսներին արձանագրված բրուցելոզի դեպքերը

Համաձայն գծապատկեր 1-ի՝ հանրապետությունում 2019թ. մայիսին արձանագրված բրուցելոզ հիվանդության դեպքերի թիվը 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.4 անգամ, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ նվազել 1.1 անգամ:

Օդակաթիլային վարակներ

<u>Գրիպ և Սուր շնչառական վարակ</u>

2019թ. մայիս ամսին Հայաստանի Հանրապետության տարածքում սուր շնչառական վարակներով (այսուհետ ՍՇՎ) պայմանավորված հիվանդացության ակտիվություն չի արձանագրվել, ինչը համահունչ է սեզոնին: ՍՇՎ դեպքերի թիվը նախորդ ամսվա համեմատ նվազել է 1 անգամ: 2019թ. մայիս ամսվա ընդհանուր ցուցանիշը 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1 անգամ, 2017թ. համեմատ՝ 1.1 անգամ:



Գծապատկեր 2. 2018-2019 թթ. հոկտեմբեր – մայիս ամիսների ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակների հիվանդացության ցուցանիշն ըստ 100.000 բնակչի

Մայիս ամսվա ընթացքում գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, ընդհանուր արձանագված գրիպանման հիվանդություններից և ծանր սուր շնչառական վարակներից հետազոտվել է 50 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում արձանագրվել է գրիպ Ա տեսակի H3 ենթատեսակի 1 դեպք, ռեսպիրատոր սենտիցիալ վիրուսի 4 դեպք, ադենովիրուսի 4 դեպք, ռինովիրուսի 12 դեպք, պարագրիպի 1 դեպք, մետապնևմովիրուսի 1 դեպք:

Այլ օդակաթիլային վարակներ (ջրծաղիկ, քութեշ, վարակային մոնոնուկլեոզ)

Ջրծաղիկ



Գծապատկեր 3. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019թթ հունվար-մայիս ամիսներին արձանագրված ջրծաղկի դեպքերը

Համաձայն գծապատկեր 3-ի՝ 2019թ. մայիսին արձանագրված ջրծաղկի դեպքերի թիվը նախորդ ամսվա համեմատ աճել է 1.1 անգամ, իսկ 2018թ նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 1.1 անգամ: Ընդհանուր առմամբ դեպքերի 80% արձանագրվել է 0-18 տարեկանների շրջանում: Առավել շատ դեպքեր արձանագրվել են քաղաքաբնակ բնակչության շրջանում, որտեղ առկա են պայմաններ մարդկանց ավելի սերտ շփման համար: Նշված ժամանակահատվածում հղիների շրջանում արձանագրվել է ջրծաղկի 6 դեպք, որի մասին տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԱՆ մոր և մանկան վարչություն:

Ընտանեկան և կազմակերպ օջախներում հնարավորության սահմաններում առաջին դեպքերը մեկուսացվել են և հսկողություն է սահմանվել հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:

Քութեշ



Գծապատկեր 4. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019 թթ. հունվար-մայիս ամիսներին արձանագրված քութեշի դեպքերը

Համաձայն գծապատկեր 4-ի՝ քութեշի դեպքերի թիվը նախորդ ամսվա համեմատ աճել է 1.3 անգամ, 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 3.5 անգամ: Դեպքերի մեծ մասը արձանագրվել է քաղաքաբնակ բնակչության շրջանում (86.5%), որտեղ առկա են պայմաններ մարդկանց ավելի սերտ շփման համար: Բոլոր դեպքերն ենթարկվել են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հնարավոր վարակի աղբյուր հանդիսացող հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, կանխելով վարակի հետագա տարածումը:

<u>Վարակային մոնոնուկլեոզ</u>



Գծապատկեր 5. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019թթ հունվար-մայիս ամիսներին արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը

Համաձայն գծապատկեր 5-ի՝ 2019թ. մայիս ամսվա ընթացքում արձանագրված մոնոնուկլեոզով պայմանավորված հիվանդության դեպքերի թիվը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել է 1 դեպքով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 1.2 անգամ: Մայիսի ընթացքում արձանագրվել է մոնոնուկլեոզի 59 դեպք, որից 48-ը՝ 0-18 տարեկան երեխաների շրջանում:

Աղիքային վարակիչ հիվանդություններ

Հայաստանի Հանրապետությունում 2019թ. մայիս ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 877 դեպք, որից 277 դեպքն արձանագրվել է Երևան քաղաքում, 600-ը՝ մարզերում: 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աղիքային վարակներով հիվանդացությունը աննշան նվազել է: Միաժամանակ՝ հունվար–մայիս ամիսների ընթացքում աղիքային վարակներով հիվանդացությունը աննշան աճել է:



Գծապատկեր 6. Աղիքային վարակների հիվանդացությունը 2018-2019թթ. հունվար– մայիս ամիսներին

2019թ. ապրիլ ամսվա համեմատ (771 դեպք) աղիքային վարակներով հիվանդացությունը աճել է մոտ 1.1 անգամ:

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխարգելելու նպատակով:

Հայաստանի Հնարապետությունում 2019թ. մայիս ամսին աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել:

Իմունականխարգելում

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: 2019թ. մայիս ամսին հանրապետությունում գրանցվել է կապույտ և հարկապույտ հազի 5 դեպք չպատվաստած և թերի պատվաստված անձանց շրջանում:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը ապրիլ ամսին կազմել է 86% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 90% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 95% (նպատակային ցուցանիշը՝ 90%):

Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

Վիրուսային հեպատիտներ

Հայաստանի Հանրապետությունում սույն թվականի մայիս ամսին սուր վիրուսային հեպատիտի դեպք չի արձանագրվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 3 դեպք:

Քիմիական թունավորումներ

Հայաստանի Հանրապետությունում մայիս ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 39.4%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 60.6%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը՝ 23.6%-ը առաջացել է ալկոհոլային թունավորումներից, 22.4%-ը՝ դեղամիջոցներով թունավորումներից (ինքնաբուժման և ծնողի անուշադրության հետևանքով), 20.1%-ը՝ թունավոր կենդանիների խայթոցից, 14.7%-ը՝ օրգանական լուծիչների, շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, 8.9%-ը՝ թունաքիմիկատների թունավոր ազդեցությունից, 6.2%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 1.9%-ը՝ բույսերի թունավոր ազդեցությունից, 1.9%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից և 0.3%-ը՝ թմրանյութի թունավոր ազդեցությունից:

2019թ. մայիս ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը աճել է 1.3 անգամ:

Մակաբուծային հիվանդություններ

Հանրապետությունում 2019թ. Մայիս ամսին մալարիայի համաճարակային իրավիճակը հանգիստ էր, մալարիայի բերովի դեպքեր չեն արձանագրվել: Մալարիայի արմատավորման կանխարգելման ներկա փուլում մալարիայի համաճարակաբանական հսկողության հիմնական խնդիրը մալարիայի համաճարակային բարվոք իրավիճակի

պահպանումն է, ինչը հնարավոր է բերովի դեպքերի վաղ հայտնաբերման և ժամանակին բուժման միջոցով:

Լեյշմանիոզ

2019թ. մայիսին ՀՀ-ում արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 1 դեպք՝ ք. Երևանից: ՀՎԿԱԿ ռեֆերենս լաբորատոր կենտրոնի մակաբուծաբանական լաբորատորիայում իրականացվել է 2 հիվանդի ախտորոշիչ հետազոտություն լեյշմանիոզի նկատմամբ՝ բացասական արդյունքով: Հետազոտությունները իրականացվել են արագ ախտորաշման իմունաքրոմատոգրաֆիկ մեթոդով: Ոսկրածուծի պունկտատի մանրադիտմամբ իրականացվել է 1 հետազոտություն՝ բացասական արդյունքով: ՊՇՌ մեթոդով հետազոտություններ մայիսին չեն իրականացվել: 2018թ. մայիսին ՀՀ-ում արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 5 դեպք:

Լայմի հիվանդություն (տզային բորելիոզ)

2019թ. ապրիլին գրանցվել է Լայմի հիվանդության 3 դեպք, որից 2-ը՝ Լոռու մարզից (մինչև 18 տարեկան տարիքային խումբ) և 1-ը ք. Երևանից:

2018թ. մայիսին արձանագրվել է Լայմի հիվանդության 1 դեպք ք. Երևանի բնակչի մոտ, որը այցելել էր ք.Դիլիջան:

Սննդային թունավորումներ

Հանրապետության տարածքում մայիս ամսին արձանագրվել է սննդային թունավորման 3 դեպք՝ 8 տուժածով, որից սնկից թունավորման 2 դեպք՝ 7 տուժածով, և ստաֆիլակոկային սննդային թունավորման 1 դեպք՝ 1 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում արձանագրվել է սնկից թունավորման 1 դեպք՝ 2 տուժածով: Սննդային թունավորման դեպքերն արձանագրվել են Կոտայքի և Արարատի մարզում: Սնկից թունավորման պատճառ է հանդիսացել տուժածների կողմից հավաքած սունկը, իսկ ստաֆիլակոկային սննդային թունավորման պատճառ է հանդիսացել խանութից գնված յոգուրտը: Սննդային թունավորման դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների

առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման վերաբերյալ, բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով, տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

Կատարող՝ Աննա Աղաջանյան
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ